բաղկացած է 30 տնից 194 շնչով, որի 106-ը արական է և 88-ը իգական։ Գիւղի դիրքը գեղեցիկ է և պճնազարդ. ընկած է միմեանցից շարքով հեռու կանգնած սարերի մէջտեղում և բաղկացած է երկու մասերի՝ վերի և ցածի. տները վերի մասում փռւած են կողք կողքի. իսկ ցածում միմեանցից հեռու են ընկած, որ ընդհանրապէս մի յարկանի են։ Օգը սքանչելի է, աղբիւրի ջրերը անուշ և լաւ, մի գեղեցիկ տեսարան է ներկայացնում։ Գիւղի հիմք գցողները եկած են հայաբնակ Նամակերտ գիւղից 60 տարի առաջ. պարապում են գլխաւորապէս հողագործութեամբ. արտերը փռւած են գիւղին կից, արևելեան կողմը, որ զարդարւած են ուռենիների և բարդիների տնկարաններով և մեծ մասամբ ջրովի են։ Օգտւում են մի աղբիւրի ջրից. դա մի ջրաղաչափ ջուր է արտադրում, որ բղխում է սարի փէշից և ոլորապտոյտ հոսելով՝ կազմում է մի փոքրիկ առու և անցնում Գրախտակի միջով։

Գիւղացիները հողազուրկ են. երկու տուն միայն հող ունեն։ Այդտեղ հող ունեն հետևեալ անձնաւորութիւնները.— Կարապետ Բամբանեան, Կարապետ Յովսէփեան, Կարապետ Տէր Յովհաննիսեան, Հաջի աղա ու Հաջի Խոսրով խաները։ Հողազուրկները վարում են սրանց հողերը և բերքի $^1/_3$ մասը տալիս նրանց. բացի այդ՝ Հաճի աղա ու Հաճի Խոսրով խաներին, իբրև պետական հարկ, տարեկան վճարում են.

Մարդալուխ	2 դռան.	Ջորս ոչխարին	2 դռան.
Կովին	2 »	Էշին	2 »

Գիւղն ունի մի եկեղեցի՝ Ս. Աստուած, որին կից գտնւում է դպրոցական շէնքը, որը զուրկ է թէ նիւթական և թէ ուսումնական միջոցներից։* Գիւղացիք մեծամասնութեամբ անգրագէտ են։

Ձիշդ է, Գրախտակի դաշտն աչքի է ընկնում իր բերրի

* Ցանկալի է, որ վերը յիշած երեք հայ հողաէրերը միացեալ ոյժերով նպաստէին այս դպրոցի կանոնաւոր զարգացման և փոքրիկ բայց օրինակելի մի դպրոց գարձնէին ամբողջ Փէրիա գաւառի մէջ։ Ս. Ն.